Փաստեր՝ Լրացուցիչ սննդի աջակցության ծրագրի մասին (SNAP)

Բովանդակություն

Ի՞նչ է SNAP-ը:	1
Արդյո՞ք կարող եք SNAP-ի նպաստ ստանալ:	1
Եթե ապրում եք Կալիֆորնիայում	2
Եկամուտի նկատմամբ պահանջներ	2
Միջոցների նկատմամբ պահանջներ	2
Զբաղվածության նկատմամբ պահանջներ	3
Ծրագրում ընդգրկվելու այլ պահանջներ	3
Ինչպե՞ս կարող եմ դիմել SNAP ծրագրով նպաստ ստանալու համար:	3
Որքա՞ն կարող է լինել օգնության չափը:	4
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	4

Ի՞նչ է SNAP-ը:

Հավելյալ սննդի տրամադրման ծրագիրը (Supplemental Nutrition Assistance Program, SNAP), նախկինում հայտնի որպես պարենային կտրոններ (food stamps), օժանդակում է ցածր եկամուտներով մարդկանց սնունդ գնելու հարցում: Թեև SNAP-ը դաշնային ծրագիր է, այն կառավարվում է նահանգային գործակալությունների տեղական գրասենյակների կողմից: SNAP-ի նպաստ ստանալու համար պետք է համապատասխանեք եկամուտների և միջոցների նկատմամբ գործող որոշակի պահանջներին:

Արդյո՞ք կարող եք SNAP-ի նպաստ ստանալ:

SNAP-ի նպաստից օգտվելու համար ձեր տնային տնտեսությունը պետք է համապատասխանի որոշակի պայմաններին և պահանջներին: Տնային տնտեսությունը ներառում է բոլոր այն մարդկանց, որոնք ապրում են ձեզ հետ, ձեզ հետ միասին գնումներ են անում և սնունդ պատրաստում:

Եթե անօթևան եք, ապա կարող եք ստանալ SNAP-ի նպաստ, նույնիսկ եթե չունեք բնակության հասցե, ժամանակավոր կացարան կամ սնունդ պատրաստելու վայր: Սովորաբար, դուք անտուն եք համարվում,

եթե չունեք գիշերելու մշտական վայր կամ ձեր հիմնական գիշերելու վայրը ժամանակավոր է և գտնվում է՝

- վերահսկվող ապաստարանում,
- բանտից արձակվածների հանրակացարանում,
- այլ անձի բնակարանում/տանը կամ
- վայրում, որը նախատեսված չէ մշտական գիշերելու համար, օրինակ՝ շենքի մուտք, ավտոբուսի կանգառ, նախասրահ:

Եթե ապրում եք Կալիֆորնիայում

Եթե Կալիֆորնիայում եք ապրում և ստանում եք Սոցիալական ապահովության լրացուցիչ եկամուտի (SSI) նպաստ, ապա սովորաբար SNAP-ի նպաստ ձեզ չի հասնում, քանի որ Կալիֆորնիայում SNAP-ի նպաստները ներառված են SSI-ի վճարներում: Այնուամենայնիվ, եթե SSI-ի նպաստից օգտվելու որոշումը դեռ չի կայացվել կամ սպասում եք SSI-ի հետ կապված ձեր բողոքի դիտարկմանը, հնարավոր է՝ իրավունք ունենաք դիմելու SNAP-ի աջակցությանը: Նպաստ ստանալու մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ձեր տեղական SNAP-ի կամ SSA-ի գրասենյակ:

Եկամուտի նկատմամբ պահանջներ

SNAP աջակցման ծրագրին մասնակցելու համար ընտանիքը պետք է համապատասխանի եկամուտի որոշակի սահմանաչափերին: Եկամուտի երկու սահմանաչափեր կան՝ համախառն և զուտ: Հիմնականում ընտանիքները պետք է համապատասխանեն ինչպես համախառն, այնպես էլ զուտ եկամուտի սահմանաչափերին:

Համախառն եկամուտը ձեր ընդհանուր եկամուտն է նախքան հարկերը վճարելը և այլ տեսակի նվազեցումները: Համախառն եկամուտից կարող եք որոշակի պահումներ անել, օրինակ՝ հանել բնակարանային ծախսերը, երեխայի ալիմենտները, երեխայի և կախյալ անձանց խնամքի վճարները, այդ թվում՝ $35 ԱՄՆ դոլարը գերազանցող բժշկական ծախսերը 60 կամ ավելի բարձր տարիքի անձանց և հաշմանդամների համար, եթե այդ ծախսերը չեն վճարվում մեկ ուրիշի, Medicaid, Medicare կամ այլ ապահովագրական ընկերության կողմից: Պահումներից մնացած գումարը կոչվում է զուտ եկամուտ (net income):

Մեծահասակներ կամ հաշմանդամության թոշակառու ունեցող տնային տնտեսությունները պետք է համապատասխանեն միայն զուտ եկամուտի պահանջին: Եթե ընտանիքի բոլոր անդամները ստանում են Սոցիալական ապահովության լրացուցիչ եկամուտ (SSI) կամ Կարիքավոր ընտանիքների ժամանակավոր օգնություն (TANF), ապա նման տնային տնտեսությունը համապատասխանում է աջակցություն ստանալու չափանիշներին: Եկամուտի սահմանաչափերը տարբերվում են, կախված ընտանիքի անդամների քանակից, և ամեն տարի կարող են փոփոխվել:

Միջոցների նկատմամբ պահանջներ

Տնային տնտեսությունները պետք է նաև համապատասխանեն միջոցների նկատմամբ կիրառվող սահմանաչափերին: Միջոցները ձեզ պատկանող գույքն է: Սովորաբար տնային տնտեսությունը կարող է ունենալ $2250 ԱՄՆ դոլարի չափով միջոցներ, օրինակ՝ կանխիկ կամ բանկային հաշվում պահվող գումարներ: Ընտանիքը կարող է ունենալ $3250 ԱՄՆ դոլարի միջոց, եթե ընտանիքի առնվազն մեկ անդամ 60 տարեկան է կամ ավելի բարձր տարիքի կամ հաշմանդամ է: Գույքի որոշակի տեսակներ որպես միջոց չեն դիտարկվում: Օրինակ՝ ձեր տունը և հողամասը միջոցներ չեն: Որոշ նահանգներում դուք նաև կարող եք ունենալ մեկ ավտոմեքենա: SSI-ի կամ TANF-ի նպաստներ ստացող մարդկանց միջոցները հաշվի չեն առնվում:

(շրջել)

Զբաղվածության նկատմամբ պահանջներ

Առանց կախյալների, 18-ից 49 տարեկան աշխատունակ անձինք, ովքեր տվյալ պահին չեն աշխատում, կարող են SNAP-ի նպաստ ստանալ միայն 3-4 ամիս՝ երեք տարվա ընթացքում: Սա կոչվում է ժամանակի սահմանաչափ: Նշված ժամանակի սահմանաչափից ավելի երկար SNAP-ի նպաստ ստանալու համար պետք է աշխատեք կամ սովորեք որևէ ուսումնական հաստատությունում, կամ մասնակցեք դասընթացների՝ ամսական առնվազն 80 ժամ: Այնուամենայնիվ, ժամանակի սահմանաչափը չի կիրառվում այն մարդկանց նկատմամբ, ովքեր չեն կարող աշխատել ֆիզիկական կամ մտավոր առողջության խնդիրների, հղիության, երեխայի կամ ընտանիքի անգործունակ անդամի խնամելու պատճառով, կամ ովքեր ազատված են զբաղվածության ընդհանուր պահանջներից: Այս պահանջը ոչ բոլոր նահանգներում է պարտադիր: Որոշ իրավիճակներում, եթե չեք աշխատում, ձեզնից կարող են պահանջել նահանգի հատուկ զբաղվածության կամ վերապատրաստման ծրագրի մասնակցել:

Ծրագրում ընդգրկվելու այլ պահանջներ

SNAP ծրագրի նպաստ ստանալու համար բացի եկամուտի և միջոցների նկատմամբ պահանջների տնային տնտեսությունը պետք է համապատասխանի նաև այլ պայմանների, օրինակ՝ ձեր ընտանիքի բոլոր անդամները պետք է արդեն ունենան կամ դիմած լինեն սոցիալական ապահովության քարտի համար:

Դուք իրավունք ունեք դիմելու SNAP ծրագրի օգնությունը, եթե ապրում եք ԱՄՆ-ում որպես օրինական քաղաքացի և համապատասխանում եք եկամուտի և միջոցների նկատմամբ գործող պահանջներին: Քաղաքացիություն չունեցող, սակայն պահանջներին համապատասխանող անձանց մեծամասնությունը SNAP ծրագրի օգնությանը դիմելու համար պետք է սպասի հինգ տարի: Այնուամենայնիվ, առանց քաղաքացիության ԱՄՆ-ում բնակվող որոշ անձինք այդքան երկար սպասելու կարիք չունեն, դրանց թվին են պատկանում օրինական բնակվող՝ 18 տարեկանը չլրացած երեխաները, տարեց մարդիկ, հաշմանդամները, փախստականները և քաղաքական ապաստան փնտրողները: Օրինական հիմքով ԱՄՆ-ում գտնվելու դեպքում դուք կարող եք նպաստ ստանալ, եթե բավականաչափ աշխատանքային ստաժ ունեք կամ ծառայել եք բանակում:

Եթե ձեր երեխաներն օրինական հիմքով են ապրում ԱՄՆ-ում կամ ԱՄՆ-ի քաղաքացի են, ապա նրանք նույնպես իրավունք ունեն օգտվելու SNAP-ի աջակցությունից, նույնիսկ եթե դուք դրա իրավունքը չունեք: Դուք կարող եք դիմել ձեր երեխաների անունից՝ առանց ձեր ներգաղթի կարգավիճակի մասին տեղեկություններ տրամադրելու:

Ինչպե՞ս կարող եմ դիմել SNAP ծրագրով նպաստ ստանալու համար:

SNAP ծրագրով նպաստ ստանալու դիմումները հասանելի են Սոցիալական ապահովության ցանկացած գրասենյակում: Եթե դուք և ձեր ընտանիքի բոլոր անդամները դիմում ներկայացնեք SSI-ի ծրագրում ընդգրկվելու համար կամ արդեն **ստանում** են **SSI**-ի վճարումներ, **Սոցիալական ապահովության ցանկացած գրասենյակում ձեզ կօգնեն լրացնել SNAP-ի ծրագրով նպաստ ստանալու դիմումը և կփոխանցեն այն SNAP ծրագրի տեղական գրասենյակ:**

Բոլոր մնացած դիմողները, ներառյալ նրանք, ովքեր **դիմում են** Սոցիալական ապահովության (Social Security) նպաստ ստանալու համար **կամ արդեն ստանում են** այդ նպաստը, պարտավոր են բերել կամ ուղարկել իրենց դիմումները SNAP-ի տեղական գրասենյակ: SNAP-ի

(շրջել)

տեղական գրասենյակը գտնելու կամ առցանց դիմելու համար այցելեք ***www.fns.usda.gov/snap/apply*** կայք:

SNAP-ի ծրագրով օգնություն ստանալու դիմումը լրացնելուց հետո դուք պետք է հարցազրույց անցնեք: Հարցազրույցը մեծամասամբ հեռախոսով է անց կացվում: Բացի դիմում ներկայացնելուց և հարցազրույցից, դուք նաև պետք է տրամադրեք որոշ տեղեկությունների ապացույցներ: SNAP-ի դիմումում ներառված տեղեկությունների ապացույց կարող են հանդիսանալ՝

- անձը հաստատող փաստաթղթեր, օրինակ՝ վարորդական իրավունքը, նահանգի ID քարտը, ծննդյան վկայականը, աշխատանքի կամ ուսումնական հաստատության ID քարտը, բժշկական ապահովագրության քարտը, ընտրողի գրանցման քարտը կամ ներգաղթի կարգավիճակը հավաստող փաստաթուղթը,
- ընտանիքի յուրաքանչյուր անդամի եկամուտի ապացույցը, օրինակ՝ վճարման անդորրագրերը, գործատուի կողմից ներկայացված քաղվածքը, Սոցիալական ապահովությունից կամ SSI-ից ստացված ֆինանսական միջոցների մասին փաստաթուղթը, պատերազմի մասնակիցների նպաստների փաստաթուղթը, գործազրկության նպաստը հավաստող փաստաթուղթը և երեխայի խնամքի համար կամ ալիմենտների վճարման փաստաթղթերը,
- կախյալ անձանց խնամքի ծախսերի ապացույցը,
- անշարժ գույքի վարձակալության վճարների կամ հիփոթեքային վարկի մարման կտրոններ,
- կոմունալ ծառայությունների ծախսերը,
- բժշկական ծառայությունների հաշիվները՝ ընտանիքի այն անդամների համար, որոնք 60 կամ ավելի բարձր տարիքի են, և նրանց, ով հաշմանդամության վճարներ է ստանում, օրինակ՝ Սոցիալական ապահովության կամ SSI-ի նպաստներ:

Դիմելուց հետո SNAP-ի գրասենյակը կուսումնասիրի ձեր դիմումը և որոշում կկայացնի՝ արդյոք ձեր ընտանիքը նպաստ ստանալու իրավունք ունի: Երեսուն օրվա ընթացքում ձեզ կտեղեկացնեն, թե արդյոք դրա իրավունքն ունեք: Արագ ձևակերպման իրավունքն ունեցող ընտանիքները նպաստը յոթ օրվա ընթացքում են ստանում: Ծրագրի օգնությանը դիմելուց հետո 30 օր ժամանակահատվածում լուրեր չստանալու դեպքում այցելեք SNAP-ի գրասենյակը:

Որքա՞ն կարող է լինել օգնության չափը:

Եթե ձեր ընտանիքը համապատասխանում է օգնություն ստանալու պահանջներին, ապա SNAP-ի նպաստի չափը կախված է ձեր ընտանիքի անդամների քանակից, ամսական եկամուտից և ծախսերից, ինչպիսիք են հիպոթեքային վարկը կամ վարձակալության վարձը, կոմունալ վճարները, երեխաների և տարեցների խնամքի հետ կապված ծախսերը: Այնուամենայնիվ, ձեզ հասանելիք օգնության չափի մասին կարող եք տեղեկանալ SNAP-ի առցանց ծրագրի միջոցով (Pre-Screening Eligibility Tool)՝ ***www.snap-step1.usda.gov/fns/*** կայքում: Հավելյալ սննդի տրամադրման այլ ծրագրերի մասին մանրամասն կարող եք տեղեկանալ՝ կարդալով «Հավելյալ սննդի տրամադրման ծրագրեր» հրապարակումը (Publication No. 05-10100) կամ այցելելով ***www.fns.usda.gov*** կայքը:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր

(շրջել)

մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:

Social Security Administration
Publication No. 05-10101-AM | February 2017
Փաստեր՝ Լրացուցիչ սննդի աջակցության ծրագրի մասին (SNAP)
Supplemental Nutrition Assistance Program (SNAP) Facts (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: